

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



| | |
|---|-----------|
| 1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ | 3 |
| 1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում | 4 |
| 1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում | 8 |
| 1.3. Ջրահեռացման համակարգ | 9 |
| 1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում | 10 |
| 1.5. Էներգահամակարգ | 10 |
| | |
| 2. Առևտրային տնօրինություն | 11 |
| 2.1. Բաժանորդների տվյալներ | 12 |
| 2.2. Հասույթ | 12 |
| 2.3. Գանձում | 14 |
| 2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ | 14 |
| 2.5. Ջրաչափեր | 15 |
| 2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում | 16 |
| | |
| 3. Տեխնիկական տնօրինություն | 17 |
| 3.1. Ջրամատակարարման շարունակականություն | 18 |
| 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում | 19 |
| 3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ | 21 |
| 3.4. Ջրատար համակարգի բարելավում | 21 |
| 3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն | 22 |
| 3.6. 1-85 թեժ գիծ | 23 |
| | |
| 4. Լրատվական ծառայություն | 24 |
| | |
| 5. Որակի, առողջության և անվտանգության բաժին | 27 |
| 5.1. Դասընթացներ/սեմինարներ | 28 |
| 5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում | 30 |
| 5.3. Բժշկական զննություններ և հետազոտություններ | 31 |
| 5.4. Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ | 31 |
| 5.5. ԲՆԿ ստանդարտների ինքնազննահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՆԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և աղապտացման աշխատանքներ | 31 |
| 5.6. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ | 31 |
| 5.7. Համագործակցություն ՀՀ ՆԳ Նախարարության և ՀՀ մարզպետարենների հետ | 32 |

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արմավիրի մարզ

● «Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի Բյուզանդի փողոցի L=310զձմ խիստ վթարային վիճակում գտնվող d=100 մմ պողպատյա ջրագիծը d=90մմ, L=300զձմ և d=110մմ, L=10զձմ պեթ խողովակով: Ջրագծի նշված L=310զձմ հատվածից սնվում են թվով 15 հասցեներ: Ջրագծի փոխարինման աշխատանքների ընթացքում սեփականություն հանդիսացող տարածքներից սահմանագատման կետ է տեղափոխվել թվով 15 ջրաչափական դիտահոր: Թվով 8 բաժանորդի ջրաչափեր փոխարինվել են նոր ջրաչափերով:



Գեղարքունիքի մարզ

● «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ջրամատակարարման համակարգում ավելցուկային ճնշումները մեղմելու նպատակով տեղադրվել է d=65մմ ճնշման կարգավորիչ փական և կառուցվել է դիտահոր:



Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Անի թաղամասում նոր անցկացված ջրագծերի միացման, փոխկապակցման հետ զուգահեռ Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրվեց, հայտնաբերվեց մի քանի կորած դիտահոր փականային հանգույցներով և խցափակման արդյունքում շահագործումից հանվեց թաղամասի մի քանի հատվածի հին ջրամատակարարման ցանցի ջրագիծ, մասնավորապես Ե. Չարենց, 11-րդ փողոցից, 15-րդ փողոցով դեպի Տ.Ճարտարապետ փողոց պարփակված տարածքները: Արդյունքում, քայքայված D-150-300մմ ջրագծերի վրա ընդհանուր չափված ջրաքանակներով, խցափակումից հետո խնայվեց մոտ 10 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցում իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում հին ջրագծի մեջ հայտնաբերվել էր ջրի առկայություն, որի պատճառը բացահայտվեց և տեղամասի կողմից խցափակման եղանակով շահագործումից հանվեց D-50մմ L-250մ պողպատե ջրագիծ՝ խնայելով մոտ 1 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի 3.2 գոտու Երկաթգծի թաղամասի Աղայան փողոցում իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում հին ջրագծի մեջ հայտնաբերվել էր ջրի առկայություն, որի պատճառը բացահայտվեց և տեղամասի կողմից խցափակման եղանակով շահագործումից հանվեց D-100մմ, L-190մ թուջե, D-100մմ L-780մ պողպատե և D-50մմ L-250մ ջրագծեր՝ խնայվեց մոտ 1-1,5 լ/վ ջրաքանակ:



Գյուղ Բավրա

● Աշոցք տեղամասի Բավրա գյուղում ուսումնասիրվեց Մ1 միջպետական ճանապարհի տակով անցնող հին, քայքայված D-100մմ պողպատե ջրագիծը, որը տեղամասի կողմից որոշվեց հանել շահագործումից և ժամանակավոր միացնել գյուղում նոր անցկացված ջրագծերին: Արդյունքում, շահագործումից հանվեց D-100մմ L-40մ պողպատե ջրագիծ՝ խնայելով մոտ 0,5 լ/վ ջրաքանակ:



Գյուղ Չկալովկա

● Սևան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Չկալովկա գյուղի տարածքում հայտնաբերվեց վթար D=500մմ պողպատե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվեց Q= 20լ/վ ջրաքանակ:





● Սևան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Չկալովկա գյուղի տարածքում հայտնաբերվեց թվով 2 վթար: 4լ/վ քանակությամբ ընդհանուր, 1 անսարք ջրաչափ և 1 ապօրինություն:



● Սևան քաղաքում Սևան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Շինարարներ 3 հասցեի հարևանությամբ հայտնաբերվեց վթար D = 100մմ ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվեց Q = 2 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Երևան

● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Արմենակյան-Հովսեփյան խաչմերուկում հայտնաբերվեց վթար D=200մմ պողպատե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվեց Q=15 լ/վ ջրաքանակ:



● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Խանջյան 19 շենքի մոտ գտնվող դիտահորի մեջ D = 250մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5 լ/վ ջրաքանակ:

● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Խանջյան գոտում՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մոտով անցնող D = 250մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 15 լ/վ ջրաքանակ:



● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Դավթաշեն Ներքին ՕԿՁ-ի ելքի՝ D = 300մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=10 լ/վ ջրաքանակ:

● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Դավթաշեն 3-րդ թաղամաս 6/5 շենքի մոտով անցնող D = 75մմ պե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 8 լ/վ ջրաքանակ:



● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Սիլիկյան 1-ին և 10-րդ փողոցների խաչմերուկում՝ $D = 150$ մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 6$ լ/վ ջրաքանակ:



● Շենգավիթ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Արարատյան փողոցով անցնող՝ $D = 300$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=20$ լ/վ ջրաքանակ:

● Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Բաբաջանյան 5/1 շենքի բակով անցնող $D=200$ մմ պողպատե ջրագծի վրա: Շահագործումից դուրս հանվեց $D=200$ մմ $L=130$ մ ջրագիծ: Արդյունքում տնտեսվեց $Q=3,5$ լ/վ ջրաքանակ:



● Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Արաբկիր 17 փողոց 23 տան դիմացով անցնող $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=7$ լ/վ ջրաքանակ:

● Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Ջ.Բրայս փողոցով անցնող ջրագծի վրա: Շահագործումից հանվեց Ջ.Բրայս 7 հասցեի մոտից $L = 100$ մ, $D = 50$ մմ պողպատե ջրագիծ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=3$ լ/վ ջրաքանակ:



Ջրահեռացման համակարգ

Վայոց ձորի մարզ

● «Վայք» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Վայք. Շահումյան 30 շենքի հարևանությամբ կառուցվել է նոր $d=200$ մմ $L=30$ գծմ պեթ երկշերտ ծալքավոր խողովակով կոյուղագիծ:

Գեղարքունիքի մարզ

● «Ճամբարակ» տեղամաս. ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի փողոց 6 և 8 շենքերի կոյուղագծերը, դիտահորերը և ե/բ ծածկերը գտնվում էին վթարային վիճակում, ինչի պատճառով հաճախակի առաջանում էին խցանումներ բակային հատվածներում ստեղծելով հակասանիտարական վիճակ: Խնդրի կարգավորման նպատակով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում փոխարինվել են Տիգրան Մեծի փողոց 8 և 6 շենքի



կոյուղագծերը (d=50մմ L=72գծմ և d=200մմ L=84գծմ պէթ երկշերտ ծալքավոր խողովակներով): Ընդհանուր առմամբ կառուցվել է L=156գծմ կոյուղագիծ, թվով 11 ե/բ դիտահոր ե/բ ծածկերով:



Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| Կատարված աշխատանքները | Չափման միավոր | Քանակ |
|--|---------------|---------|
| Չափում հոսքաչափով | տեղ | 654 |
| Որոնում խողովակափնտրիչ սարքով | մ | 22443 |
| Հոսակորուստի որոնում ակվաֆոնով | մ | 18314 |
| Հոսակորուստի որոնում կորեյատորով | մ | 880 |
| Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում | հատ | 1 |
| Շահագործումից հանված ջրագիծ | մ | 1690 |
| Կառուցված ջրագիծ | մ | 11538.8 |
| Կառուցված կոյուղագիծ | մ | 710 |
| Վերացված գաղտնի վթարներ | հատ | 26 |
| Փոխարինված փական | հատ | 38 |
| Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց | հատ | 277 |
| Մաքրված դիտահոր | հատ | 1506 |
| Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ | լ/վ | 19.9 |
| Վերացված վթարներ | | |
| | Չափման միավոր | Քանակ |
| Ջրամատակարարման ցանցում | հատ | 1043 |
| Ջրահեռացման ցանցում | հատ | 1319 |
| Պոմպակայաններում | հատ | 0 |
| Մաքրված անձրևնդունիչ | հատ | 0 |

Հոկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

| | Պոլիէթիլենային խողովակներ (հատ) | Մետաղական խողովակներ (հատ) | Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ |
|----------|---------------------------------|----------------------------|---|
| Ընդամենը | 1222 | 946 | 1102 |

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՖԻՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

| Կատարված աշխատանքներ | Ջրաչափի տրամաչափ, մմ | | | | | | | | | | Ընդամենը |
|----------------------|----------------------|----|----|----|----|----|----|----|----|-----|----------|
| | 15 | 20 | 25 | 30 | 32 | 40 | 50 | 65 | 80 | 100 | |
| Տեղադրված | 226 | 1 | 0 | 0 | 0 | 2 | 0 | 0 | 0 | 1 | 230 |
| Փոխարինված | 311 | 15 | 11 | 5 | 0 | 5 | 13 | 1 | 8 | 1 | 370 |
| Տեղափոխված | | | | | | | | | | | 0 |
| Տեխ. ակտ | 197 | 24 | 1 | 0 | 3 | 2 | 8 | 0 | 2 | 0 | 237 |
| Ընդամենը | 734 | 40 | 12 | 5 | 3 | 9 | 21 | 1 | 10 | 2 | 837 |

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 837 ջրաչափ: Կատարված աշխատանքների 88%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՇԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| h/h | Տեղամասի անվանումը | Կոյուղագծերի լվացում մ | Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ | Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում զժ/մ |
|-----|--------------------|---------------------------|---|--|
| 1 | Արաբկիր | 0 | 275 | 0 |
| 2 | Քանաքեռ-Զեյթուն | 0 | 270 | 26 |
| 3 | Մաշտոց | 230 | 212 | 72 |
| 4 | Շահումյան | 0 | 221 | 32 |
| 5 | Շիրակ | 1265 | 401 | 116 |
| 6 | Արթիկ | 70 | 97 | 3 |
| 7 | Ապարան | 0 | 50 | 0 |
| 8 | Ալավերդի | 1550 | 29 | 24 |
| 9 | Աշոցք | 370 | 7 | 0 |
| 10 | Բերդ | 315 | 10 | 0 |
| 11 | Իջևան | 0 | 61 | 4 |
| 12 | Լոռի | 0 | 213 | 12 |
| 13 | Նոյեմբերյան | 0 | 13 | 12 |
| 14 | Սպիտակ | 0 | 21 | 0 |
| 15 | Ստեփանավան | 3725 | 44 | 0 |
| 16 | Թալին | 0 | 8 | 252 |
| 17 | Տաշիր | 0 | 7 | 0 |
| 18 | Չարենցավան | 0 | 108 | 0 |
| 19 | Աբովյան | 0 | 83 | 10 |
| 20 | Հրազդան | 80 | 79 | 85 |
| 21 | Կենտրոն | 190 | 234 | 6 |
| 22 | Հյուսիս | 70 | 309 | 26 |
| 23 | Էրեբունի | 0 | 184 | 0 |
| 24 | Հարավ | 0 | 266 | 16 |
| 25 | Արմավիր | 0 | 141 | 0 |
| 26 | Արտաշատ | 0 | 127 | 18 |
| 27 | Էջմիածին | 0 | 140 | 0 |
| 28 | Աշտարակ | 1460 | 31 | 28 |
| 29 | Արարատ | 0 | 76 | 0 |
| 30 | Մասիս | 0 | 82 | 10 |
| 31 | Գավառ | 360 | 35 | 0 |
| 32 | Սևան | 18 | 66 | 0 |
| 33 | Մարտունի | 0 | 23 | 12 |
| 34 | Վարդենիս | 490 | 11 | 0 |
| 35 | Ճամբարակ | 0 | 16 | 156 |
| 36 | Դիլիջան | 0 | 51 | 29 |
| 37 | Վայք | 455 | 20 | 33 |
| 38 | Եղեգնաձոր | 25 | 18 | 0 |
| 39 | Ջերմուկ | 0 | 47 | 0 |
| 40 | Սիսիան | 0 | 39 | 0 |
| 41 | Գորիս | 0 | 54 | 0 |
| 42 | Կապան | 1410 | 88 | 14 |
| 43 | Մեղրի | 0 | 46 | 0 |
| | Ընդամենը | 12083 | 4313 | 996 |

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում գտված յուղի մղման պոմպերը դադարել էին աշխատել, քանի որ թողարկիչը վասաված էր: Թողարկիչը փոխարինվեց, և այժմ պոմպերը գործում են անխափան: Մաշվել էր նաև ավազի տեղափոխման կոնվեյերի պոլիէթիլեն պատյանը, որը փոխարինվեց նորով: Վերանորոգվեց արտադրամասի էլեկտրական դռներից մեկը, որը խափանվել էր էլեկտրականության պատճառով:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում տեղի էր ունեցել խցանում պայմանավորված մեծ քանակությամբ կեղտի հոսքով: Կուտակված կեղտը ժամանակին հեռացվեց, լուրջ հետևանքներ չառաջացան: Մանր ճաղավանդակի քերիչ սանրերը խախտվել էին, որոնք կարգաբերվեցին: Ներկայումս սարքավորումները գործում են անխափան:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի պոմպերը դադարել էին ավտոմատ ռեժիմով աշխատել: Տեխնիկական ստուգման արդյունքում պարզ դարձավ, որ ջրի մակարդակի ռելեն շարքից դուրս է եկել, որն էլ փոխարինվեց նորով: Նաև պարզվեց, որ խցանվել էին հակադարձ փականները, որոնք ապամոնտաժվեցին եւ մաքրվեցին: Ներկայումս պոմպակայանը գործում է բնականոն ռեժիմով: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| h/h | Գտնվելու վայրը | Կառույցի անվանումը | Մղված կեղտաջրերի ծավալը մ ³ | Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³ | Կեղտաջրից առանձնացած կեղտ տ |
|-----|----------------|--------------------|--|--|-----------------------------|
| 1 | ք. Գավառ | «Գավառ» ԿՄԿ | 0 | 70,298 | 10,8 |
| 2 | ք. Մարտունի | «Մարտունի» ԿՄԿ | 0 | 63,013 | 28,8 |
| 3 | ք. Վարդենիս | «Վարդենիս» ԿՄԿ | 0 | 171,192 | 5,4 |
| 4 | ք. Ջերմուկ | «Ջերմուկ» ԿՄԿ | 0 | 82,977 | 21,6 |
| 5 | ք. Դիլիջան | «Դիլիջան» ԿՄԿ | 0 | 163,645 | 18 |
| 6 | ք. Սևան | «Սևանի» N3 պ/կ | 20,607 | 0 | 0 |
| 7 | ք. Սևան | «Սևանի» N5 պ/կ | 15,142 | 0 | 0 |
| 8 | ք. Գավառ | «Գավառ» պ/կ | 12,100 | 0 | 0 |
| 9 | ք. Վարդենիս | «Վարդենիս» պ/կ | 8,350 | 0 | 0 |
| 10 | ք. Ջերմուկ | «Ջերմուկ» պ/կ | 2,148 | 0 | 0 |

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 275 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 193 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.11.2023 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 610,180 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | 2023թ. հոկտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ | Կնքված պայմանագրերի քանակը | % |
|---------------|------------------|--|----------------------------|------|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 674,095 | 581,543 | 86,3 |
| | Իրավաբանական անձ | 32,102 | 28,637 | 89,2 |

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | Բաժանորդների ընդհանուր քանակ | Ծախսող բաժանորդների քանակ | % |
|---------------|------------------|------------------------------|---------------------------|------|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 745,537 | 597,759 | 80,2 |
| | Իրավաբանական անձ | 37,620 | 27,855 | 74,0 |

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 718 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4577 ջրաչափ:

| Տնօրինություն | Սպառողներ | Մարքին | Անսարք | Միջամտած | Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 10.2023 |
|---------------|------------------|--------|--------|----------|---|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 2155 | 1480 | 412 | 4047 |
| | Իրավաբանական անձ | 348 | 131 | 51 | 530 |
| | Ընդամենը | 2503 | 1611 | 463 | 4577 |

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հոկտեմբեր ամսին փոխարինված 4577 ջրաչափերի մոտ 45 %-ը (կամ 2074 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 283,474 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հոկտեմբեր ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,972 մլն. դրամ (104 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսագանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հոկտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 232 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 35.7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

| Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական | | Բավարարված | | Մերժված | | 2017-2023թթ. ընթացիկ գործեր | | ԴԱՀԿ ներկայացված գործեր | |
|---|---------------|------------|---------------|---------|-------------|-----------------------------|---------------|-------------------------|---------------|
| քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար |
| 29,229 | 3,923,450,804 | 15,891 | 1,810,087,934 | 827 | 166,866,788 | 12,511 | 1,946,496,082 | 10,456 | 1,224,334,441 |

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 54 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

| Տնօրինություն | Պարտքը 01.11.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ) | Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ) |
|----------------------|--|---|
| Առևտրային, այդ թվում | 11,306 | 2,712 |
| Բնակիչ-բաժանորդներ | 8,022 | 1,858 |
| Իրավաբանական անձեր | 3,284 | 854 |

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 370.2 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.11.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | Բնակիչ-բաժանորդներ | | | Բրավարանական | | |
|---------------|---------------|--------------------|------------------|-------|--------------|------------------|-------|
| | | Ընդամենը | Այդ թվում ծախսող | % | Ընդամենը | Այդ թվում ծախսող | % |
| Առևտրային | Ջրաչափով | 715,960 | 596,683 | 83.34 | 36,566 | 27,846 | 76.15 |
| | Առանց ջրաչափի | 29,577 | 1,076 | 3.64 | 1,054 | 9 | 0.85 |

Տվյալների բազայում 01.11.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

| Տնօրինություն | Բնակիչ-բաժանորդներ | | | Բրավարանական | | |
|---------------|-------------------------|---------------------|-------|-------------------------|---------------------|-------|
| | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում ժամկետանց | % | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում ժամկետանց | % |
| Առևտրային | 887,360 | 384,857 | 43.37 | 40,264 | 7,759 | 19.27 |

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:
 Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 5846 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1304 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
 Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

| Հասցե | Ջրաչափերի ընդհանուր քանակ | Տեղադրված ջրաչափերի քանակ | % |
|----------------------------|---------------------------|---------------------------|------|
| գ.Քասախ | 2460 | 2018 | 81.9 |
| գ.Պոռշյան | 1695 | 1162 | 66.5 |
| ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ. | 6002 | 1944 | 32.4 |

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 17336, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 15874, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4405, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5310, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2718, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4389 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7372 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՅՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացուցների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուցների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

| Տնօրինություն | Քանակ | Խ.մ. | Գումար (ՀՀ դրամ) |
|---------------|-------|---------|------------------|
| Առևտրային | 427 | 288,525 | 54,627,541 |

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հոկտեմբեր ամսվա շարունակականության տվյալը կազմում է 96.8%, ինչը նույնն է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 45 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը՝ 2023թ-ի հոկտեմբեր ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 170 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսը նվազել է 90 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում աճել է 5266 կՎտ.ժ (1.14%), այն դեպքում, երբ նորակառույց շենքերի 6 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 5 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 2101 կՎտ.ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը՝ կլիներ 3165 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 76 էլ. հաշվիչ: Ստուգայցերի ընթացքում պարզվել է, որ «Արևշատ» ՕԿՁ-ում «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից կատարվել է խախտում, ինչի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և գրավոր ներկայացվել է «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը: Հաշվի առնելով այս և նախորդ ամսվա հայտնաբերված խախտումները («40 աղբյուր» ՕԿՁ, «Մալիշկա պ/կ») հաշվետու ամսվա փոխադարձ ակտերից նվազեցվել է 44046 կվտ/ժ էլ. էներգիա՝ 2224810 դրամ:

Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել՝ ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) և ՕԱՇ (օր առաջ շուկա) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է համապատասխանաբար 10,084,192 ՀՀ դրամ և 66,924 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պոմպակայանների ուսուսմասիրություն

Թվով 26 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսուսմասիրություններ, որոնց արդյունքում 19 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 275 բակային պոմպակայանում կատարվել են ուսուսմասիրություններ, որոնց արդյունքում թվով 193 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում տասներկու հասցեում տեղադրվել են ինվերտորային համակարգեր.


- ▶ Ադոնց 3 (Ar-21)
- ▶ Տիգրանյան 4 (Qz-17)
- ▶ Մանանդյան 3 (She-55)
- ▶ Չեխով 10 (She-143)
- ▶ Աթոյան անց. 12/3 (Er-10)
- ▶ Արարատյան 62/1 (She-47)
- ▶ Պարոնյան 4 (Ke-19)
- ▶ Դիմիտրով 76 (Er-21)

Ինվերտորային պոմպի տեղադրում

Հաշվետու ամսում տասը հասցեում տեղադրվել են ինվերտորային պոմպեր.

- ▶ Մահարի 39 (Er-20)
- ▶ Վրացյան 84/1 (Ke-115)
- ▶ Մոսկովյան 28 (Ke-39)

Տեղադրված ընդհանուր 81 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 9,132 կՎտ/ժ՝ 5%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 41 խոշոր պոմպակայանում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան


● 2023թ. հոկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրական էներգիայի ծախսը նվազել է 138 535 կՎտ/ժամ (8,77%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլեկտրական էներգիայի ծախսն ավելացել է 151 734 ԿՎտ/ժ/ամիս կամ 7,80%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսն ավելացել է 647 ԿՎտ/ժամ 0,01%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

| Աշխատանքի անվանում | Չ/Մ | Քանակ |
|---|-----------|-------|
| Վարդանանց և ԵՍ Քոչար փողոցների խ/չ-ից մինչև Նար Դոս և Քաջագնունու փողոցների ջրագծերի, ներտնային միացումների թվայնացում | փողոց | 3 |
| Արարատի մարզի Մյասնիկյան գյուղի մի շարք փողոցների վերակառուցված ներտնային միացումների թվայնացում | մարզ | 1 |
| Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի Մաշտոց փողոցի վերակառուցված ներտնային միացումների թվայնացում | մարզ | 1 |
| ՊՆ-ի թվով 15 գործարանների ջրաչափական հանգույցների տեղադիրքերի թվայնացում, քարտեզների պատրաստում | գործարան | 15 |
| Արովյան, Ալավերդի, Այրում, Բերդ, Բյուրեղավան, Զարենցավան, Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Սևան, Թալին քաղաքների հիդրավլիկ մոդելների ուղղում, թարմացում, ստուգում SCADA համակարգում առկա տվյալներով | քաղաք | 11 |
| Արարատի մարզի Միսավան, Արալեզ, Այգեգարդ և Այգեպատ համայնքների ջրագծերի հիդրավլիկ մոդելների կառուցում | մարզ | 1 |
| 260 տեխնիկական պայմանների թվայնացում (397 բաժանորդ): | տեխպայման | 260 |
| «ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը | կմ | 2652 |
| «ԱՏՀ»-ում առկա մարզերի ջրագծերի և ջրատարների երկարությունը | կմ | 9486 |
| «Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում | կետ | 287 |
| «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում | կետ | 54 |
| «Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում | կետ | 581 |
| «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում | կետ | 87 |
| ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը | կմ | 1816 |
| ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը | կմ | 1831 |

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Արարատյան ջրատարի վրա առկա օդահեռ փականները գտնվում էին անմխիթար վիճակում: Տեղադրվեց օդահեռ փական ամենաանհրաժեշտ տեղում, որի օգնությամբ ջրատարի մեջ եղած օդը դուրս եկավ՝ ապահովելով ջրատարի անխափան աշխատանքը:



● Ահագանգով տեղեկացրել էին, որ «Կորեայի» ձորում առկա է վթար: Ժամանելով վթարի վայր պարզվել էր, որ վթարվել էր Արզնի 2 ջրատարի Ջովունու ճյուղը, որի մեծությունը ≈ 2 լ/վ: Վթարը անմիջապես կանխվել է և ընդգրկվել Արզնի 2 ջրատարի կանգառով նախատեսված աշխատանքների շարքում:





● Ահագանգով տեղեկացել էին, որ մեծ քանակությամբ հողաքարային լիցք է կատարվել մեր ջրատարի վրա: Մեր կողմից պարզվեց, որ Հրազդան-Աբովյան ջրատարի Սևան մայրուղու հարակից հատվածում գործող ջրատարը ծածկվել էր հողաքարային լիցքով ≈ 150 մ երկարության և 5-10 մ հաստության շերտով:

Գատարվել են նաև ջրաքանակների կարգավորման աշխատանքներ

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության» կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Աբովյանի «Ակունք» քլորակայանում վերանորոգվել է հիպոքլորիդի հաբի համակարգի դոզավորման պոմպը հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Գյումրի, «Արեգնադեմ» քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի զննված քլորագիծը, ինչն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:

● Քաղաք Երևան, «Արզնի» քլորակայանում փոխարիվել է հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած նոր վակուում կարգավորիչը հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Գավառ, «Գանձակ» քլորակայանում տեղադրվել և ստուգվել են հեղուկ քլորի համակարգի սարքավորումները (վակուում կարգավորիչը վերանորոգված է), ինչի արդյունքում անցում է կատարվել հիպոքլորիդի հաբի համակարգից հեղուկ քլորի համակարգի:





● Քաղաք Գառնի, «Գառնի» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի հնամաշ և շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նորով:

● Քաղաք Վայք, «Հեր-Հեր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի սարքավորումները ապամոնտաժվել են կողքի սենյակ, ինչն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Երևան, Ավան Բարաչանյան 3/1 հասցեում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի ժառանգված վակուում կարգավորիչը պահեստային նպատակներով:



● Քաղաք Գառնի, «Գառնի» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մաքրվել է հեղուկ քլորի խցանված քլորագիծը:

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 36390 զանգ: Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12210 զանգ, որից Երևան քաղաքին էղել է 9644 (79%) զանգ, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2566 զանգ (21%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 24180 զանգ, որից Երևան քաղաքինը 16944 զանգ (70,1%), իսկ մարզերինը՝ 7236 զանգ (29,9%):

● 2022թ. հոկտեմբեր ամսվա համեմատ՝ 2023թ. հոկտեմբեր ամսին 1,36%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 19,99 %-ով:

● 2022թ. հոկտեմբերի համեմատ՝ 2023թ. հոկտեմբեր ամսին 24%-ով նվազել է ֆիքսված զանգերի քանակը, 8%-ով ավելացել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 29%-ով նվազել է հայտարարությունների լուսն ավտոմատ ծառայության միջոցով:

Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

● 2022թ. հոկտեմբերի համեմատ՝ 2023թ. հոկտեմբեր ամսին 44.46%-ով նվազել են ջրամատակարարման բողոքները:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

| | Ստորաբաժանում | 2022 Հոկտեմբեր | 2023 Հոկտեմբեր | |
|----------------------------|----------------------------|-------------------|-------------------|--------------|
| Առևտրային | Ընդամենը | 12046 | 12210 | 1.36% |
| | Երևան | 9580 | 9644 | 0.67% |
| | Մարզեր | 2466 | 2566 | 4.06% |
| Շահագործում | Շահագործում | 30223 | 24180 | -19.99% |
| | Երևան | 23317 | 16944 | -27.33% |
| | Արարիկ | 5354 | 3869 | -27.74% |
| | Քանաքեռ-Զեյթուն | 2616 | 1718 | -34.33% |
| | Մաշտոց | 3151 | 1742 | -44.72% |
| | Շահումյան | 1667 | 1789 | 7.32% |
| | Շենգավիթ | 3197 | 2326 | -27.24% |
| | Կենտրոն | 2914 | 2154 | -26.08% |
| | Հյուսիս/Ավան Նոր Նորք/ | 2888 | 1835 | -36.46% |
| | Էրեբունի | 1530 | 1511 | -1.24% |
| | այդ թվում կոյուղու վթար | 213 | 227 | 6.57% |
| | այդ թվում դիտահորի խցանում | 7311 | 5834 | -20.20% |
| | ՄԱՐԶԵՐ | 6906 | 7236 | 4.78% |
| | Հարավ | 3179 | 3297 | 3.71% |
| Հյուսիս | 3727 | 3939 | 5.69% | |
| այդ թվում կոյուղու վթար | 69 | 56 | -18.84% | |
| այդ թվում դիտահորի խցանում | 2428 | 3118 | 28.42% | |
| Ընդամենը | 42269 | 36390 | -13.91% | |

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Մեկտեմբերի վերջին՝ Արցախից մեր հայրենակիցների բռնի տեղահանումից հետո, «Վեոլիա Ջուր» ընկերությունը, հավատարիմ մնալով իր որդեգրած սոցիալական պատասխանատվության գաղափարին, հազարավոր արցախցիների ցուցաբերեց հումանիտար օգնություն, որը, բնականաբար, կլինի շարունակական: Դրանից բացի, Ընկերության արագ արձագանքման շնորհիվ Կոտայքի մարզի Բյուրեղավան, Հրազդան համայնքներում, Արարատի մարզի Արարատ, Մասիս քաղաքներում, Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում վերաբնակեցված հարյուրավոր արցախցիներ ապահովվել են կայուն ջրամատակարարմամբ: Իսկ որպես արցախցիներին օգնելու երկարաժամկետ ծրագիր, ՎեոլիաԹիմը համալրելու նպատակով Ընկերությունը առանձնացրեց մի քանի տասնյակ հաստիքներ Երևանում և մարզերում: Հաստիքների մասին ամբողջ տեղեկատվությունը տեղադրվեց ընկերության պաշտոնական



կայքէջում, ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև Հանրային կապերի ծառայության կողմից տարածվեց սոցիալական տարբեր էջերում:

Հոկտեմբեր ամսին մեծ թափով շարունակվեցին ջրագծերի ու կոյուղագծերի կառուցման, վթարների վերացման աշխատանքները: Ավարտվեցին մի քանի մեծածավալ ջրաշինարարական աշխատանքներ, որոնք սկսվել էին դեռևս ամռանը:

Մասնավորապես, Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Աբովյան փողոցի 120 բաժանորդ արդեն ջուր է ստանում նոր ջրագծով: 2,5 ամսում ՎեոլիաԹիմը այստեղ կառուցեց 2550 գծամետր պոլիէթիլեն խողովակաշար՝ խնայելով վայրկյանում 15 լիտր ջուր: Ու չնայած տարվա այս շրջանում, ցրտով և տեղումներով պայմանավորված բարդ է նոր աշխատանքներ սկսելը, այնուամենայնիվ, Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Շահումյան և Գանձակ գյուղի Մախարովի ու Բաբաջանյան փողոցներում մեկնարկեցին նոր ջրագծերի կառուցման աշխատանքները:



Կոտայքի մարզի Ջրառատ գյուղում, որտեղ վերջին 2 տարում ընկերությունը վերակառուցեց 4 կմ-ոց ջրագիծ, որպես այդ աշխատանքների ավարտական փուլ, ՎեոլիաԹիմը ջրագծերի վրա տեղադրեց ճնշման կարգավորիչ փականներ, որոնք թույլ են տալիս գյուղին ջուր մղել 2 մթն ճնշմամբ: Իսկ դա լրիվ բավարար է 100 բաժանորդի կայուն ջրամատակարարում ապահովելու համար:

Հոկտեմբեր ամսին մեծածավալ շինարարական աշխատանքները ընթացան նաև Տավուշի մարզում, որոնք ամբողջությամբ լուսաբանվեցին Հանրային կապերի ծառայության կողմից: Տավուշի մարզի Բերդ քաղաքի Մասունցի Դավիթ փողոցում կառուցվեց նոր ջրագիծ: Իջևանում սկսվեց ամռանը տեղացած հորդառատ անձրևների հետևանքով առաջացած սողանքի գոտին շրջանցող «Անապատի» ջրագծի 400 գծամետր խողովակաշարի կառուցման աշխատանքները: Լուծվեց նաև Լուսաձոր



համայնքի ջրամատակարարման խնդիրը: Համայնքի համար կառուցվեց նոր ջրընդունիչ և ջրամատակարարման համակարգ: Դա հնարավորություն տվեց վայրկյանում 2 լիտրով ավելացնել գյուղին տրվող ջրաքանակը:

Նոր ջրագծեր ունեն արդեն Կոտայքի մարզի Ֆանտան գյուղի Ոսպանյան փողոցը, Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի 11-րդ փողոցը: Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի փողոցի բազմաբնակարան շենքերում ևս ջրամատակարարումը դարձավ հուսալի, կայուն և որակյալ շնորհիվ նոր կառուցված ջրագծերի:

Հաշվետու ամսում լուծվեց Սյունիքի մարզի Հացավան գյուղում պարբերաբար գրանցվող վթարների խնդիրը: Բանն այն է, որ «Մուխուրթուրյան-Աշոտավան-Հացավան» ջրատարի այն հատվածը, որով ջուր էր մղվում Հացավան, տարիներ առաջ կառուցվել էին անորակ, ջրի ճնշմանը չդիմացող խողովակներով: «Վեոլիա Ջուր» ընկերությունը փոխարինեց ջրատարի այդ հատվածը՝ 16 մթն ճնշմանը դիմացող 110 մմ-ոց պոլիէթիլեն խողովակներով:

Քիչ էին նաև համակարգում գրանցված վթարների վերացման մասին նյութերը: «Հացառատ-Լճաշեն» 530 մմ-ոց ջրատարի վթարը վայրկյանում 20 լիտր ջրի կորստով, վերացնելու համար հայտարարվեց 24-ժամյա ջրանջատում: Մակայն ՎեոլիաԹիմի արագ և օպերատիվ աշխատանքի շնորհիվ ջրամատակարարումը

վերականգնվեց ժամանակից շուտ, որն ամբողջությամբ լուսաբանվեց Հանրային կապերի ծառայության կողմից: Ժամանակատար և բարդ աշխատանք էր Բերդի «Չաթախ» ջրատարի վրա առաջացած 3 վթարների վերացման աշխատանքները: Այստեղ տեղամասը աշխատեց 2 օր, սակայն սպառողները կենցաղային որևէ անհարմարություն չզգացին, քանի որ այդ ընթացքում ջուր ստանում էին «Տավուշ» ջրատարից: Հայտնաբերելով գաղտնի վթարն ու կանխելով վայրկյանում 20 լիտր ջրի կորուստը՝ կանոնակարգվեց նաև Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ թաղամասի ջրամատակարարումը: Վթարներ վերացվեցին նաև Երևանի Ֆրունզեի, Տերյան փողոցներում, Արցախ-Արին Բերդ փողոցների խաչմերուկում, Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղում և մի քանի այլ բնակավայրերում:

Հաշվետու ամսում մի քանի բնակավայրերում արմատապես լուծվեց կոյուղագծերի հետ կապված խնդիրները: Մասնավորապես, Վայք քաղաքի Շահումյան 30 և Ծաղկաձորի Մուրադյան 2 շենքերի պարբերաբար վթարվող և խցանվող, երբևէ չվերանորոգված կոյուղագծերը փոխարինեցին նորերով: Լուսաբանվեց Մարտունի-Վարդենիս Մ1 մայրուղով անցնող Մարտունի քաղաքի կենտրոնական կոյուղագծի խցանումը, որի վրա ՎեոլիաԹիմը աշխատեց 3 օր: Կոյուղին այն աստիճան էր լցված կենցաղային աղբով և ասֆալտի կտորներով, որ մասնագետները ստիպված եղան խողովակի վրայից անցքեր բացել և հատուկ գործիքներով մաքրել և փակել այն:

Շատ կարևոր էր նաև Երևանի Հալաբյան 59 շենքի մոտ 900 մմ-ոց հեղեղատար համակարգի խողովակաշարի փոխարինման աշխատանքներն ու 2 դիտահորի տեղադրումը, որոնք թույլ կտան անձրևների ժամանակ քաղաքի այդ հատվածում խուսափել ջրի հեղեղումներից:

Ընկերության ֆեյսբուքյան էջում հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են վթարային և պլանային ջրանջատումների, ինչպես նաև ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման մասին հրապարակումները:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Ընկերության Հյուսիս Շահագործման տնօրինության թվով 207 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:

- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները և
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթացները:



● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 32 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը:

- ▶ «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորման» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթացները:



● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Ընկերության Հարավ Շահագործման տնօրինության թվով 96 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 5 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:

- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթացները:




● ՈԱԱ բաժինը, ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02Լ հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, Ընկերության Տեխնիկական տնօրինության 3 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց 2 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.


- ▶ «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ սարքավորումների տեխնիկայես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի որակավորման» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց:



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 6 քլորակայանում, 2 պոմպակայանում և 30 վարչական շենքերում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուսնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 7 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների



5.3 ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

● ՈԱԱ բաժինը, հաշվետու ամսում ևս, առաջնորդվելով, ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն և 15-ը հուլիսի 2004 թվականի N1089-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներով՝ աշխատողի առողջական վիճակի դինամիկ հսկողության, մասնագիտական հիվանդությունների կանխարգելման և դրանց սկզբնական նշանների ժամանակին հայտնաբերման, դժբախտ պատահարների կանխման ու աշխատանքի անվտանգության պահպանման, վարակիչ և մակաբուծային հիվանդությունների տարածման կանխարգելման, հիվանդությունների հայտնաբերման, տարեկան պարտադիր բժշկական զննությունների և լաբորատոր հետազոտությունների արդյունքների հիման վրա Բժշկական կենտրոնի կողմից սահմանված կարգով իրականացրեց համապատասխան փաստաթղթերի լրացման և Ընկերությանը փոխանցման աշխատանքները:

5.4 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնածին վթարների կանխարգելման և բացառման, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում «Պրոմէքսպերտ Գրուպ» ՍՊԸ-ի փորձագետների կողմից, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացրել է թվով 21 Արտադրական Վտանգավոր Օբյեկտի (10 քլորակայան, 1 ամբարձիչ հարմարանքով կահավորված ավտոմեքենա, 10 ամբարձիչ սարքավորում) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ, որի շրջանակներում Ընկերությունն իրականացնում է վերանորոգման, կարգաբերման և այլ տիպի աշխատանքները:

5.5 ԲՈՎ ՍՏԱՆԴԱՐՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՈՎ ՍՏԱՆԴԱՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Հաշվետու ամսում իրականացվել են Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի կառավարման թվով 1 ստանդարտի (Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ) ինքնագնահատման աշխատանքներ:
- Միաժամանակ իրականացվում են գնահատված ստանդարտների Ընկերության համակարգում ներդրման աշխատանքներ:

5.6 ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՊՄ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Հաշվետու ամսում ևս իրականացվել են ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների կարիքների գնահատման և անհրաժեշտ քանակների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ:

5.7. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ

● Համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 2023թ-ի հոկտեմբեր 18-ին, Ընկերության «Հյուսիս» Շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասը՝ ՈԱԱ բաժնի համակարգում, մասնակցեց «Երկրաշարժի հետևանքով վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսուցնավարժությանը:





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am